

DOI: 10.59560/18291155-2025.4-13



ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

*Հայ-ռուսական համալսարանի
իրավունքի տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի վարիչ,
ՀՀ կառավարման ակադեմիայի իրավունքի
ամբիոնի պրոֆեսոր,
իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան
ORCID ID: [0000-0002-6322-4664](https://orcid.org/0000-0002-6322-4664)*

**ՔՐԵԱԿԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՔՐԵԱԿԱՆ
ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Ամփոփագիր

Սույն հոդվածում քննարկվում են նյութական իմաստով քրեական մեղադրանքի կառուցվածքային տարրերը և քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ դրանց արտացոլման անհրաժեշտությունը: Մեղադրանքը դիտարկվում է որպես երկու հարաբերականորեն ինքնուրույն հիմքերի՝ փաստական և իրավաբանական, միասնություն, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է նկարագրությունից (գնահատականից) և համապատասխան հիմնավորումից: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում մեղադրանքի փաստական հիմնավորմանը, այսինքն՝ ապացույցների ներկայացմանը և վերլուծությանը, որը մեղադրանքի հիմքի մասին հանգամանորեն տեղեկացվելու մեղադրյալի սահմանադրական իրավունքի իրականացման անհրաժեշտ պայմաններից է:

Հոդվածում փաստվում է, որ քրեական հետապնդում հարուցելու որոշման մեջ ամրագրված մեղադրանքը պետք է ունենա ոչ միայն փաստական նկարագրություն և իրավական գնահատական, այլև դրանց համապատասխան հիմնավորում՝ տվյալ դատավարական փուլի համար թույլատրելի քանակով ու խորությամբ: Այս պահանջի իրավական հիմքերը բացահայտվում են սահմանադրական (որոշումների պատճառաբանվածություն, մեղադրանքի հիմքի մասին տեղեկացվելու իրավունք) և քրեադատավարական (ՀՀ ՔրԴՕ-ի համապատասխան նորմեր) մակարդակներով: Հեղինակը նաև ուսումնասիրում է ապացույցներ վկայակոչելու սահմանափակումներ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԳԻ 4(121)2025
13

Հիմնաբառեր. մեղադրանքի կառուցվածք, մեղադրանքի փաստական հիմք, մեղադրանքի փաստական նկարագրություն, մեղադրանքի փաստական հիմնավորում, մեղադրանքի իրավաբանական հիմք, արարքի իրավական գնահատական, քրեական հետապնդում հարուցելու որոշում, ապացույցներ վկայակոչելու պահանջ, պատճառաբանվածություն, մեղադրանքի հիմքի մասին տեղեկացվելու իրավունք:

1. Ներածություն

Քրեական դատավարությունում մեղադրանքը՝ որպես պաշտոնական մեղադրական վարկած, կազմված է փաստական և իրավաբանական հիմքերից: Յուրաքանչյուր հիմք իր հերթին ներառում է բովանդակային նկարագրություն և դրա համապատասխան հիմնավորում: Այս կառուցվածքային մոտեցումը մեղադրանքի պատշաճ ձևակերպման կարևոր պայմաններից է: Քրեական հետապնդում հարուցելու որոշման մեջ մեղադրանքի փաստական և իրավաբանական հիմքերի բոլոր տարրերի արտացոլման պահանջը պայմանավորված է մեղադրյալի՝ իր դեմ ներկայացված մեղադրանքի բնույթի ու հիմքի մասին հանգամանորեն տեղեկացվելու սահմանադրական իրավունքի իրականացման և այդ որոշման պատճառաբանված լինելու պահանջով:

Այս հոդվածում կքննարկվեն մեղադրանքի փաստական ու իրավաբանական հիմքերը՝ իրենց բաղադրիչներով, ինչպես նաև՝ այն հիմնավորումը, թե ինչու քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումը, որպես մեղադրանքի առաջին պաշտոնական ամրագրում, պետք է պարունակի ոչ միայն արարքի փաստական նկարագրությունը և իրավական գնահատականը, այլև դրանց համապատասխան փաստական ու իրավական հիմնավորումները՝ նախաքննության փուլի համար թույլատրելի քանակով ու խորությամբ:

2. Մեղադրանքի կառուցվածքը

2.1. Մեղադրանքի կառուցվածքային տարրերը

Նյութական իմաստով մեղադրանքի կառուցվածքի հարաբերական ինքնուրույն տարրերն են՝

1) մեղադրանքի փաստական հիմքը (կողմը), որն իր հերթին կազմված է հետևյալ տարրերից՝ մեղադրանքի փաստական հիմքի նկարագրությունից (մեղադրանքի փաստական նկարագրություն) և մեղադրանքի փաստական հիմքի հիմնավորումից (մեղադրանքի փաստական հիմնավորում, այսինքն՝ ապացույցների ներկայացում և վերլուծություն),

2) մեղադրանքի իրավաբանական հիմքը (կողմը), որն իր հերթին կազմված է հետևյալ տարրերից՝ արարքի իրավական գնահատականից և մեղադրանքի իրավական հիմնավորումից, այսինքն՝ փաստերի և նորմերի համադրությունից և նորմերի մեկնաբանումից:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 4(121)2025

Սխեմա 1.

ՔՐԵԱԿԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- 1. ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԻՄՔԸ (ԿՈՂՄԸ)
 - 1.1. Մեղադրանքի փաստական նկարագրությունը
 - 1.2. Մեղադրանքի փաստական հիմնավորումը
 - 1.2.1. Ապացույցների ներկայացումը
 - 1.2.2. Ապացույցների վերլուծությունը
- 2. ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ (ԿՈՂՄԸ)
 - 2.1. Արարքի իրավական գնահատականը
 - 2.2. Մեղադրանքի իրավական հիմնավորումը
 - 2.2.1. Փաստերի և իրավական նորմի համադրությունը
 - 2.2.2. Նորմերի մեկնաբանումը
 - 2.2.2.1. Իմպլիցիտ (ոչ բացահայտ) մեկնաբանումը
 - 2.2.2.2. Էքսպլիցիտ (բացահայտ) մեկնաբանումը

Եթե մեղադրական եզրակացության մեջ ապացույցներ վկայակոչելը և դրանք վերլուծելը կասկածի տեղիք չի տալիս, ապա նույնը չի կարելի ասել քրեական հետապնդում հարուցելու որոշման մասին, քանի որ շատերի համար այդ որոշման կառուցվածքում մեղադրանքի փաստական նկարագրությունից բացի, մեղադրանքի փաստական հիմնավորումն առանձնացնելը վիճելի է: Ժամանակակից սահմանադրաիրավական և քրեադատավարական կարգավորումների պայմաններում առկա են բավարար հիմքեր պնդելու, որ ցանկացած պաշտոնական մեղադրանք, անկախ նրանից, թե այն դատավարության որ փուլում է կայացվում և ինչ դատավարական փաստաթղթում է ամրագրվում, բացի *փաստական նկարագրությունից*, պետք է ունենա նաև, տվյալ փուլի համար թույլատրելի քանակով և խորությամբ (մանրամասնությամբ), *փաստական հիմնավորում*, այսինքն՝ մեղադրանքի փաստական նկարագրության մեջ նշված հանգամանքները պետք է հիմնավորվեն պատշաճ ապացույցներով և դրանց վերլուծությամբ:

2.2. Մեղադրանքի փաստական հիմքը

Մեղադրանքի կառուցվածքային առաջին տարրը մեղադրանքի փաստական հիմքն է կամ փաստական կողմը, որի բաղկացուցիչ մասերն են՝ մեղադրանքի փաստական նկարագրությունը և մեղադրանքի փաստական հիմնավորումը:

ՀՀ ՔրԴՕ-ի տարբեր հոդվածներում հանդիպում են «մեղադրանքի փաստական հիմք», «մեղադրանքի փաստական նկարագրություն», «մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքներ» և «մեղադրանքի փաստական հիմնավորում» ձևակերպումները: Այսպես՝ ՀՀ ՔրԴՕ մի շարք հոդվածներում «մեղադրանքի փաստական նկարագրություն» ձևակերպման փոխարեն երբեմն օգտագործվում են «մեղադրանքի փաստական հանգամանքներ» կամ

«մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքներ» ձևակերպումները (տե՛ս, օրինակ, ՀՀ ՔրԴՕ 21-րդ հոդվածի 5-րդ մաս, 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ), սակայն հոդվածների համատեքստից պարզ է, որ խոսքը հենց մեղադրանքի փաստական նկարագրության մասին է: Օրինակ՝ ՀՀ ՔրԴՕ 464.2-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ արագացված վարույթը մերժվում է, եթե արարքի իրավական գնահատականն ակնհայտորեն չի համապատասխանում *մեղադրանքի փաստական հանգամանքներին*: Ակնհայտ է, որ այս պարագայում մեղադրանքի փաստական հանգամանքները նույնն է, ինչ մեղադրանքի փաստական նկարագրությունը:

Սա նշանակում է, որ օրենսդրության մեջ մեղադրանքի փաստական հիմքի և դրա երկու տարրերի՝ մեղադրանքի փաստական նկարագրության և մեղադրանքի փաստական հիմնավորման վերաբերյալ ձևակերպումները, նույնիսկ օրենսդրական տերմինների օգտագործման հարթությունում, միասնական չեն: Նման իրավիճակում դոկտրինը և պրակտիկան, ելնելով յուրաքանչյուր հոդվածի համատեքստից, պետք է որոշեն, թե «մեղադրանքի փաստական հիմք» ձևակերպումն ինչ ծավալով է պետք մեկնաբանել՝ սահմանափակ, թե՛ տառացի: Օրինակ՝ ՀՀ ՔրԴՕ 324-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային մեղադրողը բացման խոսքում ներկայացնում է մեղադրանքի փաստական հիմքը: Սույն հոդվածի նպատակաբանական վերլուծությունից հստակ է, որ «մեղադրանքի փաստական հիմք» ձևակերպումը պետք է ենթարկել սահմանափակ մեկնաբանման, որի արդյունքում «մեղադրանքի փաստական հիմք» ասելով կհասկացվի միայն մեղադրանքի փաստական նկարագրությունը, բայց ոչ՝ մեղադրանքի փաստական հիմնավորումը: Բանն այն է, որ դատարանում մեղադրանքի փաստական նկարագրության ներկայացումն արդարացված է հրապարակայնության սկզբունքի տեսանկյունից, մինչդեռ՝ մեղադրանքի փաստական հիմնավորումը ներկայացնելն ինքնանպատակ է, քանի որ մեղադրանքի փաստական հիմնավորման մեջ ներկայացված ապացույցները դեռևս պետք է հետազոտվեն դատարանում: Բացի այդ, դատաքննության սահմանները որոշվում են միայն մեղադրանքի փաստական նկարագրությամբ, այսինքն՝ մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքներով (ՀՀ ՔրԴՕ 21-րդ հոդվածի 5-րդ մաս, 276-րդ հոդվածի 4-րդ մաս), բայց ոչ՝ մեղադրանքի փաստական հիմնավորումով:

Այժմ ներկայացնենք մեղադրանքի փաստական հիմքի և նրա բաղկացուցիչ մասերի (մեղադրանքի փաստական նկարագրության և փաստական հիմնավորման) էությունը և դրանց վերաբերյալ օրենսդրության մեջ առկա կարգավորումները և ձևակերպումները:

Մեղադրանքի փաստական հիմքի էությունը բացահայտված է, օրինակ, ՀՀ ՔրԴՕ 189-րդ հոդվածի 4-րդ մասում, 444-րդ հոդվածի 2-րդ մասում: Ըստ նշված դրույթների՝ մեղադրանքի փաստական հիմքն է՝ մեղսագրվող արարքի էությունը, կատարման տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները, որքանով դրանք պարզված են առկա ապացույցներով:

Այլ կերպ ասած՝ մեղադրանքի փաստական հիմքն ինքնին (per se) վերացական կատեգորիաներով (արարքի էությունը, արարքի կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն) օրենսդրական կաղապար (բլանկ) է, որին պետք է տալ կոնկրետ բովանդակություն (նկարագրություն):

Մեղադրանքի փաստական նկարագրությունը մեղադրանքի փաստական հիմքը կազմող վերացական կատեգորիաներով բլանկի՝ կոնկրետ և առարկայական լրացումն է կարևոր մանրամասներով: Մեղադրանքի փաստական նկարագրությունն ըստ էության մեղադրանքի փաստական հիմքի կոնկրետ նկարագրությունն է: Մեղադրանքի փաստական հիմքը կենսունակություն է ձեռք բերում, երբ այն նկարագրվում է, այսինքն՝ մեղադրանքի փաստական հիմքը կազմող վերացական կատեգորիաներին տրվում են կոնկրետ բնութագրություններ: Այսպես.

մեղադրանքի փաստական հիմքը - «[Ազգանուն, անուն]ը մեղադրվում է [արարքի էության անվանումը՝ օրինակ՝ գողություն] կատարելու մեջ, որն իրականացվել է [տեղ], [ժամանակ], [եղանակ], [այլ հանգամանքներ]:»

մեղադրանքի փաստական նկարագրությունը - «Պողոս Պողոսյանը մեղադրվում է այն բանի համար, որ նա, ուրիշի գույքն անհատույց, ապօրինի իրենը դարձնելու նպատակով, 2023 թվականի նոյեմբերի 10-ին, ժամը՝ 19:30-ի սահմաններում, Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանում գտնվող "Արեգակ" սուպերմարկետից գաղտնի հափշտակել է թվով երկու հատ 0,5լ տարողությամբ "Արարատ" տեսակի կոնյակ և մեկ տուփ "Իշխան ձկնկիթ", որի արդյունքում "Արեգակ" ՍՊ ընկերությանը պատճառվել է 76,000 ՀՀ դրամի վնաս»:

Այս օրինակում հստակ է մեղադրանքի փաստական հիմքի՝ որպես վերացական կատեգորիաներով օրենսդրական կաղապարի, և փաստական նկարագրության՝ որպես այդ կաղապարի կոնկրետացման, հարաբերակցությունը:

Մեղադրանքի փաստական նկարագրությունը մեղադրանքի փաստական կողմի հենասյունն է, առանց որի մեղադրանքի փաստական հիմքը կվերաճվի զուտ դատարկ խոսքերի: Սակայն մեղադրանքի փաստական հիմքը կլինի ինքնաբավ (ամբողջական), եթե մեղադրյալի իրավունքներին անմիջապես վերաբերող դատավարական փաստաթղթերում արտացոլվի ոչ միայն մեղադրանքի փաստական նկարագրությունը, այլ նաև մեղադրանքի փաստական հիմնավորումը:

Մեղադրանքի փաստական հիմնավորումը մեղադրանքի փաստական նկարագրության մեջ նշված հանգամանքները հիմնավորող պատշաճ ապացույցների (տվյալ փուլի համար թույլատրելի քանակով և խորությամբ) ներկայացումն ու վերլուծությունն է: Մեղադրանքի փաստական նկարագրությունը, առանց մեղադրանքի փաստական հիմնավորման, վերաճվում է զուտ մեղադրական «սյուժեի» կամ նարատիվի (narrative -պատում, պատմվածք), որը կարող է լինել ճշմարտանման, սակայն հորինված, եթե այն չի հիմնավորվում ապացույցներով:

Մեղադրանքի փաստական հիմնավորման էությունն առավել տեսանելի դարձնելու համար այն ներկայացնենք Պողոս Պողոսյանի հիպոթետիկ գործի օրինակով: Վերոհիշյալ մեղադրանքի փաստական հիմքի նկարագրությունը հիմնավորվում է հետևյալ ապացույցներով և դրանց վերլուծությամբ:

1) Գողության էության վերաբերյալ.

Ապացույցներ. Սուպերմարկետի տնօրենի ցուցմունքը բացակայող ապրանքների մասին, Պողոսյանի բնակարանում կատարված խուզարկության արձանագրությունը և հայտնաբերված նույնական ապրանքների լուսանկարները:

Վերլուծություն. Այս ապացույցները հաստատում են, որ հանցագործության առարկաներն են հանդիսացել 0.5լ երկու շիշ «Արարատ» կոնյակը և մեկ տուփ «Իշխան» ձկնկիթը, որոնք սուպերմարկետի սեփականությունն էին:

2) Կատարման տեղի վերաբերյալ.

Ապացույցներ. «Արեգակ» սուպերմարկետի տեսահսկողության տեսախցիկների առգրավման արձանագրությունը և տեսաձայնագրությունները, որոնք ցույց են տալիս Պողոսյանի ներկայությունը խանութում:

Վերլուծություն. Տեսաձայնագրություններն անհերքելիորեն հաստատում են, որ մեղադրյալը գտնվել է հենց այն սուպերմարկետում, որտեղից գողացվել է գույքը:

3) Կատարման ժամանակի վերաբերյալ.

Ապացույցներ. Տեսաձայնագրությունների վրա եղած ժամային նշումը (ժ. 19:28-19:33), որը ցույց է տալիս գործողությունների տրամաբանական հաջորդականությունը:

Վերլուծություն. Այս ապացույցների համադրությունը թույլ է տալիս ճշգրիտ որոշել հանցագործության կատարման ժամանակը՝ 2023 թ. նոյեմբերի 10, մոտավորապես 19:30 և այլն:

Այսպիսով՝ մեղադրանքի փաստական նկարագրությունը պատասխանում է. «ի՞նչ է կատարվել» հարցին, իսկ մեղադրանքի փաստական հիմնավորումը պատասխանում է. «ինչո՞ւ պետք է հավատանք, որ դա հենց այդպես է կատարվել, և հենց այդ մարդն է կատարել» հարցին:

2.3. Մեղադրանքի իրավաբանական հիմքը

Մեղադրանքի հաջորդ կառուցվածքային տարրը մեղադրանքի իրավաբանական հիմքն է կամ իրավաբանական կողմը, որի բաղկացուցիչ մասերն են՝ արարքի իրավական գնահատականը և մեղադրանքի իրավական հիմնավորումը:

Իրավունքի տեսությունում և քրեական իրավունքում մեղադրանքի իրավաբանական կողմի առնչությամբ օգտագործվում է «արարքի իրավաբանական որակում» հասկացությունը¹: Իրավաբանական որակումը գործի փաստական հանգամանքների համադրությամբ համապատասխան իրավական նորմի

¹ *Сабитов Р.А. Общая теория квалификации противоправных и правомерных деяний и событий: монография. - М.: Юрлитинформ, 2022.*

ընտրությունը և վերլուծությունն է¹: Իրավաբանական որակումը սխալ կլիներ ներկայացնել որպես միանվագ ակտ: Այն բարդ, երբեմն՝ երկարատև գործունեություն է, որը կապված է նորմի ընտրության և դրա մեկնաբանման հետ²: Ի տարբերություն 1998 թ. ՀՀ ՔրԴՕ-ի, «արարքի իրավաբանական որակում» հասկացությունը 2021թ. ՀՀ ՔրԴՕ-ում չի օգտագործվում, դրա փոխարեն նշվում է արարքի իրավաբանական գնահատականի մասին:

Իրավական գնահատականը մեղադրանքի պարտադիր ձևական տարրն է, որը ենթադրում է հղում ՀՀ ՔրԴՕ-ի համապատասխան հոդվածի, դրա մասի կամ կետի վրա: ՀՀ ՔրԴՕ 189-րդ հոդվածի 4-րդ մասում արարքի իրավական գնահատական է համարվում քրեական օրենսգրքի այն հոդվածի կամ հոդվածի մասի կամ կետի վկայակոչումը, որով պատասխանատվություն է նախատեսված անձին մեղսագրվող արարքի կատարման համար:

Պողոս Պողոսյանի հիպոթետիկ գործի օրինակով արարքի իրավական գնահատականը կարող է ձևակերպվել հետևյալ կերպ.

«Պողոս Պողոսյանի գործողությունները համապատասխանում են ՀՀ ՔրԴՕ 254-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գողության հանցակազմի հատկանիշներին»:

Մեղադրանքի իրավական հիմնավորումը բովանդակային-փաստարկային մտավոր գործընթաց է, որը ներառում է ՀՀ ՔրԴՕ-ի համապատասխան հոդվածում նկարագրված հատկանիշների հետ մեղադրանքի փաստական նկարագրության համադրությունը, ինչպես նաև նորմերի մեկնաբանումը:

Իրավական հիմնավորման մեջ համադրությունը գործնականում փաստերի և օրենքի նորմի միջև կապի մանրամասն բացատրությունն է, այսինքն՝ ինչպես են կոնկրետ փաստական հանգամանքները լրացնում օրենքի նորմում տրված հանցակազմի վերացական հասկացությունները: Արարքի իրավական գնահատականը պատասխանում է «ՀՀ ՔրԴՕ-ի ո՞ր հոդվածով է մեղադրվում» հարցին, իսկ մեղադրանքի իրավական հիմնավորումը պատասխանում է «ինչո՞ւ է այս արարքը ենթակա որակման ՀՀ ՔրԴՕ-ի այդ հոդվածով» հարցին:

Պողոս Պողոսյանի հիպոթետիկ գործի օրինակով իրավական հիմնավորումը կարող է ձևակերպվել հետևյալ կերպ.

«Վերոհիշյալ փաստական հանգամանքները համապատասխանում են ՀՀ ՔրԴՕ 254-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված գողության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներին.

1) Օբյեկտիվ կողմ. առկա է գաղտնի հափշտակում, քանի որ Պողոսյանն առանց վճարելու և առանց վաճառողի գիտության ու համաձայնության («Արեգակ») ՍՊ ընկերության գույքը (կոնյակն ու ձկնկիրը) գաղտնի վերցրել և հեռացել է խանութի տարածքից:

¹ Պեպրության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան: 4-րդ հրատ.: Եր., «Լուսարած», 2023, էջ 360:

² **Алексеев С.С.** Собрание сочинений. В 10 т. Том 3: Проблемы теории права: Курс лекций. - М.: Статм, 2010. - С. 635.

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 4(121)2025

2) Օբյեկտ. գործողության առարկան ուրիշի գույք է («Արեգակ» ՍՊ ընկերությանը պատկանող ապրանք), որն ունի նյութական արժեք և տնտեսական նշանակություն:

3) Սուբյեկտիվ կողմ. Պողոսյանը գործել է ուղղակի դիտավորությամբ՝ գիտակցելով իր գործողությունների բնույթը և ցանկացել է տվյալ գույքն անհատույց իրենը դարձնել»:

Իրավական հիմնավորման բաղկացուցիչ մասն է նաև քրեաիրավական նորմի մեկնաբանումը: Իրավական առումով պարզ գործերով, երբ ՀՀ ՔրՕ-ի նորմի բովանդակությունն ընկալվում է տառացի իմաստով և դրա վերաբերյալ վեճ չկա, ապա դատավարական փաստաթղթում նորմի մեկնաբանմանը հատուկ բաժին չի նվիրվում (պայմանականորեն անվանենք՝ իմպլիցիտ մեկնաբանում): Այս դեպքերում ևս առկա է նորմի մեկնաբանում (որը իրավակիրառման պարտադիր մասն է), պարզապես այն համարվում է փաստերի և նորմի համադրման անբաժանելի և իմպլիցիտ բաղադրիչը: Օրինակ՝ եթե իրավական հիմնավորման մեջ նշվում է, որ «փաստական հանգամանքները համապատասխանում են հողվածում նկարագրված հատկանիշների հստակ իմաստին», ապա սա նշանակում է, որ քննիչը կամ դատախազը մեկնաբանել են նորմը՝ հիմք ընդունելով դրա բառացի իմաստը: Ավելին նշելն ինքնանպատակ է և կծանրաբեռնի փաստաթուղթը:

Իրավական հիմնավորման բաժնում քրեաիրավական նորմի մեկնաբանմանը պետք է նվիրել առանձին բաժին, եթե, օրինակ՝ առկա է հարակից հանցակազմերի սահմանազատման խնդիր, կամ քրեաիրավական նորմերի մրցակցության կամ նորմերի հակասության լուծման, կամ հանցակազմի գնահատողական հատկանիշի պարզաբանման անհրաժեշտություն (պայմանականորեն անվանենք՝ էքսպլիցիտ մեկնաբանում):

Պողոս Պողոսյանի հիպոթետիկ գործի օրինակով ներկայացնենք իրավական հիմնավորման մեջ նորմերի մեկնաբանման վերը նշված երկու տարբերակը.

Տարբերակ առաջին - «Պողոս Պողոսյանի գործողությունները (փաստական նկարագրությունը) համապատասխանում են ՀՀ ՔրՕ 254-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գողության հանցակազմի՝ գույքի գաղտնի հափշտակման հատկանիշներին»:

Այս տարբերակում մեկնաբանումն իմպլիցիտ է, քանի որ «համապատասխանում է (...) հատկանիշին» արտահայտությունն ինքնին ենթադրում է, որ դատախազը մտավոր գործընթացում մեկնաբանել է տվյալ հասկացությունը և տեսել է, որ փաստերը համընկնում են դրա հետ: Իրավական հիմնավորման մեջ մեկնաբանմանն առանձին բաժին նվիրելու կարիք չկա:

Տարբերակ երկրորդ - «Պողոս Պողոսյանի գործողությունները համապատասխանում են ՀՀ ՔրՕ 254-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գողության հանցակազմի հատկանիշներին: Սույն դրույթում նախատեսված «գաղտնի հափշտակում» հասկացությունը, սույն գործի համատեքստում, ներառում է՝ 1) ապօրինի, 2) ոչ բռնի, 3) տիրոջ գիտությունից և կամքից գաղտնի, 4) անհատույց հափշտակում, որի հետևանքով սեփականատիրոջը պատճառվել է

նյութական վնաս: Վերը նկարագրված փաստական հանգամանքները ճշգրիտ համապատասխանում են այս մեկնաբանությանը»:

Այս տարբերակում մեկնաբանումը բացահայտ է, քանի որ հիմնավորման մեջ առանձին նախադասություններով և կետ առ կետ ներկայացվում է, թե ինչ է նշանակում «գաղտնի հափշտակումը» սույն դեպքի համար: Իրավական հիմնավորման մեջ նորմի մեկնաբանումը ներկայացված է որպես առանձին տրամաբանական քայլ:

3. Քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ ապացույցներ վկայակոչելու պահանջի իրավական հիմքերը

3.1. Ապացույցներ վկայակոչելու հարցի վերաբերյալ դոկտրինալ բանավեճը

Քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման կառուցվածքում մեղադրանքի փաստական նկարագրությունից բացի, մեղադրանքի փաստական հիմնավորումն առանձնացնելը շատերի համար վիճելի է¹, սակայն մինչև այս պահանջի սահմանադրաիրավական և քրեադատավարական հիմնավորումներին անդադառնալը, ներկայացնենք այս հարցի վերաբերյալ դոկտրինալ բանավեճը և դրա զարգացումը:

Այս հարցի վերաբերյալ բանավեճը սկիզբ է առնում դեռևս խորհրդային ժամանակաշրջանից: Դեռևս 1920 թվականի հոկտեմբերին Արդարադատության ժողկոմատը հրահանգել էր քննիչներին կազմել «մեղադրանք առաջադրելու մասին» պատճառաբանված որոշում: Այս դրույթն այնուհետև ներառվեց 1923 թ. ՔրԴՕ-ի 128-րդ, 129-րդ հոդվածներում, որտեղ սահմանված էր, որ անհրաժեշտ է կայացնել անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին պատճառաբանված որոշում, որում նշվում են՝

«ում կողմից է որոշումը կայացվել, այն կազմելու տեղը և ժամը, մեղադրյալի անուն, ազգանունը և հայրանունը, հանցագործության կատարման վայրը, ժամանակը և այլ հանգամանքներ, ինչպես նաև ներգրավման հիմքերը» (ընդգծումը՝ հեղինակի):

Որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ «ներգրավման հիմքեր»-ը պարտադիր նշելու մասին օրենսդրական դրույթի առկայության պայմաններում խորհրդային դատավարագետները կարծում էին, որ քննիչը պետք է հղումներ կատարի ապացույցների վրա, կամ պարզապես թվարկի ապացույցները՝ առանց դրանց բովանդակությունը շարադրելու: Մ.Ս. Ստրոգովիչը և Դ.Ա. Կարնիցկին,

¹ **Рахунов Р.Д.** Участники уголовно-процессуальной деятельности. - М.: Госюриздат, 1961. - С. 194; **Стремовский В.А.** Предварительное расследование в советском уголовном процессе. - М.: Госюриздат, 1958. - С.16; **Полянский Н.Н.** Очерки развития советской науки уголовного процесса. - М.: Изд-во АН СССР, 1960. - С. 133; **Ղազարյան Ա.** Ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկացվելու մեղադրյալի իրավունքը (գիտազործնական մեկնաբանություններ): ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 2024, № 2 (114), էջ 109-110:

մեկնաբանելով այս հոդվածը, ընդգծում էին, որ քննիչը պետք է որոշման մեջ խմբավորի հավաքված ապացույցներն այնպես, որ դրանից տրամաբանական բխի անձին որպես մեղադրանքի ներգրավելու հիմնավորումը: Նրանք նշում էին, որ ոչ մի դեպքում թույլատրելի չեն գործի նյութերի վրա պարզ հղումները կամ բավարար հիմքերի առկայության վերաբերյալ ընդհանուր արտահայտությունները. անհրաժեշտ է որոշման մեջ նշել, թե որ նյութերն են քննիչին հանգեցրել տվյալ անձին որպես մեղադրյալ ներգրավելու եզրակացությանը, և թե որոնք են անձի դեմ ունեցած ապացույցների էությունը¹: Այլ դատավարագետներ ևս պաշտպանում էին այս մոտեցումը²: Լիտվական ԽՍՀ ՔրԴՕ 162-րդ հոդվածում ուղղակիորեն սահմանված էր, որ քրեական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման մեջ նշվում են «հիմնական ապացույցները, որոնք քննիչը հնարավոր կգտնի նշել»: Նույն բնույթի կանոն պարունակում էր նաև Ղազախական ԽՍՀ ՔրԴՕ 158-րդ հոդվածը:

1960 թ. ՔրԴՕ-ում պահպանվել էր որպես մեղադրյալ ներգրավելու որոշումը պատճառաբանելու պահանջը, սակայն այլևս նշված չէր, որ որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մեջ պետք է շարադրել «ներգրավման հիմքերը»³:

Քրեական հետապնդման հարուցման և մեղադրանքի օրենսդրական բնորոշումներում մեղադրանքի փաստական նկարագրության և մեղադրանքի փաստական հիմնավորման մասին դրույթի առկայությունը բավարար հիմքեր է ստեղծում հստակեցնելու մեր դիրքորոշումը և նշելու, որ քրեական հետապնդում հարուցելու որոշման մեջ պետք է, նախաքննության փուլի համար թույլատրելի քանակով և խորությամբ (մանրամասնությամբ), վկայակոչել և վերլուծել այն ապացույցները, որոնցով պարզվել են մեղադրանքի փաստական նկարագրության մեջ նշված հանգամանքները:

Այս մոտեցումը թերևս այլևս խորթ չէ ՀՀ քրեադատավարական իրականությանը: Վերջին տարիներին քննիչը կամ դատախազը նախաքննության ընթացքում տարբեր դատավարական փաստաթղթերում վկայակոչում և վերլուծում են ապացույցներ: Այսպես՝ քննիչը կալանք կիրառելու մասին միջնորդությունում վկայակոչում է այն փաստական տվյալները (ապացույցները), որոնք առերևույթ հաստատում են մեղադրյալի առնչությունը (կապը) իրեն մեղսագրված հանցագործությանը: Ավելին, քննիչը միջնորդությունում ոչ միայն վկայակոչում է այդ ապացույցները, այլ նաև դրանց պատճենները տրամադրում է պաշտպանության կողմին:

Բացի այդ, քրեական հետապնդումից անձեռնմխելիությամբ օժտված անձանց նկատմամբ հետապնդում հարուցելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի միջնորդագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա միջնորդագրերում

¹ *Карницкий Д.А., Строгович М.С. Уголовно-процессуальный кодекс РСФСР. Текст и постатейный комментарий.* - М.: Юрид. изд-во НКЮ РСФСР, 1925. - С. 105. *Մ.Ս. Սիրոզովիչը հեղափայլում հրաժարվել է այս մոտեցումից:*

² *Жогин Н.В., Фаткуллин Ф.Н. Предварительное следствие в советском уголовном процессе.* - М.: Юрид. лит., 1965.- С. 205-206.

³ *Курс уголовного процесса / Под ред. Л.В. Головки.* - М.: Статут, 2016. - С. 737.

անխոչընդոտ վկայակոչում և վերլուծում է բազմաթիվ ապացույցներ: Այսպես՝ ՀՀ գլխավոր դատախազը, պատգամավոր Մ. Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու վերաբերյալ 18.06.2018 թ. միջնորդագրում վկայակոչել է բազմաթիվ ապացույցներ: Մեջբերենք միջնորդագրի այդ հատվածը.

«Վերը նկարագրված փաստական հանգամանքները պարզվել են հետևյալ ապացույցներով,

- ՀՀ Արմավիրի մարզի (...) հասցեներում գտնվող, Մ. Գրիգորյանին պատկանող առանձնատներում խուզարկություն կատարելու մասին արձանագրություններով, հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված նյութերը գնելու մասին արձանագրություններով, որոնց համաձայն՝ սկսած 05.06.2018 թ.-ից Մ. Գրիգորյանը, վերջինիս ընտանիքի անդամները, ինչպես նաև այլ անձինք ակտիվ գործողություններ են իրականացրել Գրիգորյանի բնակարանում, այլ վայրերում գտնվող զենքերը տեղափոխելու, փոխադրելու, թաքցնելու ուղղությամբ:

- Վկաների՝ Մ. Գրիգորյանին պատկանող առանձնատների աշխատակիցների ցուցմունքներով այն մասին, որ խուզարկված տները փաստացի պատկանել են Մ. Գրիգորյանին, վերջինս հաճախակի գտնվել է նշված առանձնատներում, դրանց սպասարկումն իրականացրած անձինք գործել են նրա հրահանգներով, հայտնաբերված պահածոյացված սննդամթերքն օգտագործվել է Մ. Գրիգորյանի կենդանիներին կերակրելու նպատակով:

- ՀՀ Արմավիրի մարզի (...) հասցեներում գտնվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականների գնության արձանագրությամբ:

- «Արա և Այծեմնիկ» ԲԲԸ-ին պատկանող շինությունում խուզարկություն կատարելու մասին արձանագրությունով:

- Վկաների՝ զինվորներին պարենային օգնության ապրանքներ տրամադրած անձանց ցուցմունքներով այն մասին, որ զինվորների համար նախատեսված սննդամթերքը ՀՀ տարածքում գործող դպրոցների և այլ կազմակերպությունների կողմից տրամադրվել են նաև «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպության տարածքային ստորաբաժանումներին (...):

ՀՀ գլխավոր դատախազի միջնորդագրում ապացույցներ վկայակոչելը և վերլուծելը ոչ թե եզակի դեպք է, այլ կայուն պրակտիկա¹: Վերջին դեպքը պատգամավոր Հ. Աղազարյանին անձեռնմխելիությունից զրկելու վերաբերյալ գործն է, որով ՀՀ գլխավոր դատախազը միջնորդագրում վկայակոչել է բազմա-

¹ Տե՛ս Արմեն Չարչյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու մասին 23.01.2023 թ. ՀՀ գլխավոր դատախազի միջնորդագիրը, էջ 4-12 (http://www.parliament.am/draft_docs8/K-498_mijnordutyun.pdf), Արթուր Սարգսյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու մասին 03.07.2025 թ. ՀՀ գլխավոր դատախազի միջնորդագիրը, էջ 3-73 (http://www.parliament.am/draft_docs8/1119_Mijnordagir.pdf):

թիվ ապացույցներ, այդ թվում՝ ցուցմունքներ և առերես հարցաքննության արձանագրություններ¹:

Փաստորեն հնարավոր են իրավիճակներ, երբ նախաքննության գաղտնիքը չի ֆետիշացվում. դատարանի, ով քննում է խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը և ՀՀ Ազգային ժողովի, ով քննում է պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու համաձայնություն տալու հարցը, ինչպես նաև այդ վարույթներով պաշտպանության կողմի համար նախաքննության ընթացքում մի շարք ապացույցներ դառնում են հասանելի: Դրանով արդարադատությունը «չի կործանվում»:

Քրեական հետապնդում հարուցելու որոշման մեջ ապացույցներ վկայակոչելու և վերլուծելու պահանջն ունի սահմանադրաիրավական և քրեադատավարական հիմքեր:

3.2. Ապացույցներ վկայակոչելու պահանջի սահմանադրաիրավական հիմքերը

3.2.1. Հետապնդում հարուցելու որոշումը ապացույցներով պատճառաբանելու սահմանադրական պահանջը

Դատախազի՝ որպես սահմանադրական մարմնի պաշտոնատար անձի, արտաքին ազդեցությամբ ակտերը պետք է լինեն պատճառաբանված: Դրա հիմքում ընկած է հանրային իշխանության մարմինների իրավակիրառ ակտերի պատճառաբանվածության (հիմնավորվածության, փաստարկման) ընդհանուր սկզբունքը:

Ժամանակակից իրավական պետությունում պատճառաբանված պետք է լինեն ոչ միայն դատարանների ակտերը, այլ նաև պետական մարմինների իրավակիրառ բոլոր ակտերը: Իրավակիրառ ակտերի պատճառաբանվածությունը (հիմնավորվածությունը, փաստարկված լինելը) ճանաչվում է որպես իրավունքի ընդհանուր սկզբունք²:

Ժամանակակից դոկտրինում ընդունված է այն մոտեցումը, որ իրավակիրառ ակտերի պատճառաբանվածության սկզբունքը պայմանավորված է Յուրգեն Հաբերմասի կողմից առավել ամբողջական մշակված խորհրդատվական (դելիբերատիվ) ժողովրդավարության (լատ. deliberatio-ից՝ քննարկում, զննում) հայեցակարգով³, որի հիմքում ընկած է նաև որոշումների պատճառների համակողմանի քննարկման գաղափարը: Այս տեսանկյունից, գործադիր իշխանության մարմինների ժողովրդավարական լեգիտիմության պակասությունը մասնակիորեն փոխհատուցվում է նրանց կայացրած որոշումների պատճառները

¹ Տե՛ս Հովիկ Աղազարյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն փախու մասին 23.01.2023 թ. ՀՀ գլխավոր դատախազի միջնորդագիրը, էջ 4-26 (http://www.parliament.am/draft_docs8/1023_Hovik_Aghazaryan_mijnordagir.pdf):

² Должиков А., Васильева А. «Почему? По кочану!»: принцип обоснованности в административном праве // Сравнительное конституционное обозрение. 2023. № 6 (157). - С. 33-65.

³ Хабермас Ю. Демократия. Разум. Нравственность: Московские лекции и интервью / Пер. с нем. - М.: КАМИ, 1995. - С. 230.

ներկայացնելով¹: Օրինակ՝ գերմանացի նշանավոր գիտնական Ռոբերտ Ալեքսին, սահմանադրական դատարանի օրինակի հիման վրա, ցույց է տալիս, որ իշխանության այն մարմինները, որոնք զուրկ են ուղղակի ժողովրդավարական լեգիտիմությունից (այսինքն՝ չեն ընտրվում), կարող են լեգիտիմացվել իրենց որոշումների խիստ պատճառաբանվածության, ռացիոնալության և հասարակության բանական անդամների համար դրանք ընդունելի դարձնելու միջոցով²: Այս պարագայում պետական մարմնի որոշումները պատճառաբանելը դառնում է ոչ թե պարզապես բարոյական կամ զուտ ընթացիկ օրենսդրական պահանջ, այլև նրա լեգիտիմության աղբյուր, որը պետականագիտական առումով լրջագույն փաստարկ է դատախազի՝ քրեական հետապնդում հարուցելու որոշման պատճառաբանվածության վերաբերյալ ավանդական մոտեցումները վերանայելու համար:

Դատախազությունը՝ որպես «չընտրված», բայց սահմանադրական հզոր պետական մարմին, լեգիտիմության հարցում խոցելի է: Նրա լեգիտիմության հիմնական աղբյուրը բանականության և իրավական օրենքի նկատմամբ հավատարմությունն է:

Եթե դատախազի որոշումը, որով մարդը պաշտոնապես ենթարկվում է քրեական հետապնդման, չի պարունակում քրեական հետապնդման անհրաժեշտության փաստական-ապացուցողական պատճառաբանություն, ապա այդ որոշումը և այն կայացնող մարմինը զրկվում են դեփբերատիվ ժողովրդավարության կառուցակարգով լեգիտիմացվելու հնարավորությունից, քանի որ առանց ապացույցների հղումների և վերլուծության, անհնար է հասկանալ՝ որոնք են այն «օբյեկտիվ փաստերը», որոնց հիման վրա դատախազը որոշել է քրեական հետապնդում հարուցել մարդու նկատմամբ: Այլ կերպ ասած՝ կոնկրետ գործով տեղի է ունենում դատախազության լեգիտիմության կորուստ, քանի որ նրա որոշումը հասարակության ու անհատի համար դադարում է լինել հասկանալի և ստուգելի: Տրամաբանական ու հիմնավորված փաստարկների բացակայության պարագայում բանական քաղաքացու կողմից այդ որոշումը չի կարող համարվել ընդունելի:

ՀՀ սահմանադրական համակարգում հսկող դատախազի՝ քրեական հետապնդում հարուցելու որոշման մեջ, բացի մեղադրանքի փաստական նկարագրությունից, նաև դրա փաստական հիմնավորումները նշելը պետք է դիտարկել իրավական պետության գաղափարից բխող՝ պետական մարմինների որոշումների պատճառաբանվածության ընդհանուր պահանջ:

Իրավակիրառ ակտը հիմնավորելու պարտականությունը, օրինակ, գերմանական հանրային իրավունքի դոկտորինում դիտվում է որպես իրավական պետության սկզբունքի վրա կառուցված ցանկացած իրավաբանական վարույթի կարևոր պահանջ, որպես վարույթային երաշխիք: Վարչական մարմինների

¹ Должигов А., Васильева А. Указ. соч. - С. 59.

² Алекси Р. Сбалансированность, конституционный контроль и представительство // Сравнительное конституционное обозрение. 2006. №2 (55). - С. 116.

կողմից կայացվող որոշումները հիմնավորելու պարտականությունը ծառայում է ներգերատեսչական ինքնավերահսկողության նպատակներին՝ կանխարգելելով որոշումների կայացման փաստական և իրավական հիմքերի գնահատման հարցում կամայական և ձևական մոտեցումները: Իր հերթին, որակյալ հիմնավորումների առկայությունը կատարում է արդյունավետ իրավական պաշտպանության գործառույթ՝ ստեղծելով շահագրգիռ անձի համար պայմաններ ակտի վիճարկման վերաբերյալ կշռադատված որոշում կայացնելու համար¹: Ցանկացած չպատճառաբանված որոշման «հետևում ինչ-որ բան կա՝ կա՛մ կաշառք, կա՛մ ոչ պրոֆեսիոնալիզմ, կա՛մ դատական որոշումներ գրելու անկարողություն և այլն»²:

«Սահմանադրական դատարանը 15.06.2010 թ. ՍԴՈ-896 որոշմամբ նշել է, որ օրենսդրությունն ընդհանրապես պետք է բացառի չպատճառաբանված դատական ակտի գոյությունը, որովհետև նման ակտը չի կարող համապատասխանել իրավական պետության հիմնարար սկզբունքներին, չի կարող երաշխավորել մարդկանց իրավունքների արդյունավետ դատական պաշտպանություն, ինչպես նաև ապահովել խախտված իրավունքների արդյունավետ վերականգնում:

«Սահմանադրական դատարանը դատախազության վերաբերյալ կայացրած տարբեր ակտերի վերաբերյալ ևս կարևորել է դրանք պատճառաբանելու, փաստարկելու անհրաժեշտությունը: Այսպես՝ Դատարանը 28.12.2010 թ. ՍԴՈ-931 որոշմամբ նշել է, որ «արագացված կարգ կիրառելու դեմ դատախազության առարկությունը չի կարող դիտվել որպես «բացարձակ վետոյի» իրավունք, այդ առարկությունը պետք է լինի փաստարկված»: Դատարանն անթույլատրելի է համարել, որ դատախազի առարկությունը կարող է լինել «բացարձակ վետո», այսինքն՝ չպատճառաբանված մերժում:

«Սահմանադրական դատարանը 28.07.2015 թ. ՍԴՈ-1225 որոշմամբ փաստելով, որ դատախազի կողմից նախաքննության ժամկետի երկարացման հարցում առկա է տարաբնույթ պրակտիկա, որպես դրա լուծման ճանապարհներից մեկը, սահմանել է դատախազական գործողությունների համար պատճառաբանված որոշում կայացնելու օրենսդրական պահանջի ամրագրումը:

«Նման իրավիճակը կարող է հաղթահարվել օրենսդրական կարգավորումների հստակեցման, ինչպես նաև դատախազական հսկողության իրականացման պարճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջի ամրագրման պայմաններում»:

Այսպիսով, վերը նշված սահմանադրաիրավական վերլուծությունը ստեղծում է այն ինտելեկտուալ նախադրյալը, որի հիման վրա պետք է քննարկվի քրեական

¹ *Должиков А., Васильева А. Указ. соч. - С. 57.*

² *Верховенство права и проблемы его обеспечения в правоприменительной практике: международная коллективная монография. 2-е изд., перераб. - М.: Статут, 2010. - С. 323.*

հետապնդում հարուցելու մասին դատախազի որոշումը կոնկրետ ապացույցներով և դրանց վերլուծությամբ պատճառաբանելու հարցը:

Որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ ապացույցներ վկայակոչելու պահանջն ակտերի պատճառաբանվածության լույսի ներքո լավագույնս ներկայացրել են խորհրդային դատավարագետներ՝ Ն. Ժոգինը և Ֆ. Ֆատկուլլինը: Նրանք կարծում էին, որ որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մեջ ապացույցները վկայակոչելու հրամայականը ոչ այլ ինչ է, քան ուղղակի պահանջ հենց սկզբից պատճառաբանել մեղադրանքը, իսկ դա հնարավոր չէ այլ կերպ կատարել, քան որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մեջ մեղադրանքի հիմքում դրված ապացույցները և փաստարկները ներկայացնելով: Ի վերջո, մյուս բոլոր դատավարական ակտերի նկատմամբ (օրինակ՝ դատավճռի) պատճառաբանություն ասելով հասկացվում է համապատասխան փաստական տվյալների վրա հղումները (...) հնարավոր չէ մեղադրանքը պատճառաբանել հենց մեղադրանքի միջոցով, դա կարելի է անել բացառապես այն հաստատող փաստական տվյալների օգնությամբ (...) Այսպիսով, ամեն մի մեղադրանք պետք է լինի հիմնավորված և պատճառաբանված: Քննիչն ազատ է ապացույցների ընտրության հարցում, որոնք նպատակահարմար է վկայակոչել որոշման մեջ: Սակայն նա յուրաքանչյուր գործով պետք է պատճառաբանի ներկայացվող մեղադրանքը՝ նշելով դրա հիմքում ընկած փաստական տվյալներն ու փաստարկները (...) Սա ոչ միայն նախնական քննության մարմինների իրավունքն է, այլև պարտականություն, որն ունի սկզբունքային նշանակություն¹:

3.2.2. *Մեղադրանքի հիմքի մասին հանգամանորեն տեղեկացվելու սահմանադրական իրավունքը*

«Սահմանադրության 67-րդ հոդվածի (մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը) 1-ին կետի համաձայն՝ հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝ ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք:

Այս իրավունքը 2005 թ. խմբագրությամբ «Սահմանադրության տեքստում էքսպլիցիտ ամրագրված չէր, սակայն այն կրկնում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասը: Նախապես նշենք, որ «Սահմանադրությամբ ամրագրված մեղադրանքից պաշտպանվելու իրավունքի և Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված նույնանուն իրավունքի բովանդակությունը կարող է տարբերվել: «Սահմանադրությամբ երաշխավորված մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը կարող է ունենալ գործողության ավելի լայն ոլորտ և ապահովման լրացուցիչ երաշխիքներ, քան Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված այդ նույն իրավունքը: Պարզապես Եվրոպական կոնվենցիայով ամրագրված իրավունքի՝ Եվրոպական դատարանի ձևավորած չափորոշիչներն այն նվազագույն շեմն է, որից այնկողմ ներպետական մարմինները չեն կարող

¹ *Жогин Н.В., Фаткуллин Ф.Н. Предварительное следствие в советском уголовном процессе.- М.: Юрид. лит., 1965. - С. 207, 210.*

անցնել, սակայն վերջիններս այդ իրավունքի գործողության ոլորտը կամ ապահովման երաշխիքները կարող են ընդլայնել: Այս իմաստով, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ մեղադրանքից պաշտպանվելու իրավունքի բովանդակությունը պարզելու համար պետք է նկատի ունենալ նաև Եվրոպական դատարանի դիրքորոշումը, որպես երաշխիքների ամրագրման նվազագույն շեմ, սակայն սահմանադրական իրավունքի բովանդակությունը բացահայտելիս պետք է հաշվի առնել նաև ներպետական իրավական համակարգի առանձնահատկությունները և ավանդույթները: Այսպես՝ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը X-ն ընդդեմ Բելգիայի գործով (*X v. Belgium*, 09.05.1977 թ. որոշում) հաստատել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի, մեղադրյալն իրավունք ունի տեղեկացված լինել մեղադրանքի հիմքի մասին, այսինքն՝ իր դեմ առաջադրված նյութական փաստերի, որոնք մեղադրանքի հիմքն են, և մեղադրանքի բնույթի մասին, այսինքն՝ այդ նյութական փաստերի իրավական որակման մասին: Սույն դրույթում նկատի ունեցված մանրամասն տեղեկատվությունը պետք է պարունակի այն նյութը, որն օգնում է մեղադրյալին պատրաստել իր պաշտպանությունը, սակայն պարտադիր չէ, որ նշվեն մեղադրանքի հիմքում ընկած ապացույցները: Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը Սակրամատին ընդդեմ Իտալիայի գործով (*Luigi Sacramati v. Italy*, 06.09.1995 թ. որոշում) վերահաստատել է այս պահանջը:

Եթե Եվրոպական դատարանը (Հանձնաժողովը) վաղ անցյալում նշել է, որ ներկայացված մեղադրանքի հիմքի մասին հանգամանորեն տեղեկացվելու իրավունքն ինքնին չի ներառում որոշման մեջ ապացույցներ վկայակոչելու պահանջ, դա ինքնին չի նշանակում, որ անդամ պետություններն իրենց օրենսդրությամբ կամ դատական պրակտիկայում չեն կարող նախատեսել մեղադրանքից պաշտպանվելու իրավունքի ավելի բարձր չափանիշներ:

Եվրոպական դատարանի կողմից նշած՝ մեղադրանքի փաստական հանգամանքների նկարագրության մասին տեղեկացվելու իրավունքն անկասկած վճռական նշանակություն ունի մեղադրանքից պաշտպանվելու համար, սակայն այդ նկարագրության հիմքում ընկած ապացույցների մասին տեղեկացված լինելու դեպքում մեղադրանքից պաշտպանվելու մեղադրյալի հնարավորությունը, հատկապես մինչդատական վարույթում, կլինի առավել արդյունավետ: Բացի այդ, նման պահանջի գործնական կենսագործումը կսահմանափակի քննիչի կամ դատախազի հնարավորությունը «ստեղծել» ճշմարտանման մեղադրական պատմվածք («սյուժե» կամ նարատիվ (պատմություն)), որի կարևոր հանգամանքները որևէ ապացույցով պարզված չեն:

Այս առումով՝ մեղադրանքից պաշտպանվելու իրավունքի ապահովման երաշխիքների հարցում ՀՀ սահմանադրաիրավական և քրեադատավարական համակարգերն ունեն զարգացման բավարար հեռանկարներ:

ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 1-ին կետում նշված «մեղադրանքի հիմք» հասկացությունը դեռևս մեկնաբանվում է նեղ իմաստով. մեղադրանքի հիմք ասելով հասկացվում է մեղադրական փաստական նկարագրությունը՝ առանց ապացույցներ ներկայացնելու և վերլուծելու պահանջի (առանց փաստական

հիմնավորման): Առանց մեղադրանքի փաստական հիմնավորման մեղադրանքի փաստական նկարագրությունը վերածվում է զուտ մեղադրական «սյուժեի»: Մեղադրական այդ նարատիվը կարող է լինել ճշմարտանման, սակայն հորինված, եթե այն չի հիմնավորվում ապացույցներով: Ուստի ժամանակն է «մեղադրանքի հիմք» սահմանադրական հասկացությունը, հաշվի առնելով նաև ՀՀ ՔրԴՕ-ում առկա նոր կարգավորումները, մեկնաբանել տառացի, որի պարագայում մեղադրանքի հիմք ասելով կհասկացվի ինչպես մեղադրանքի փաստական նկարագրությունը, այնպես էլ փաստական հիմնավորումը¹:

Սահմանադրական հարթությունում «մեղադրանքի հիմք» արտահայտության տառացի ընկալումը պայմանավորված է նաև մեղադրանքի հիմքի մասին տեղեկացվելու իրավունքում «հանգամանորեն» բառի լեզվաբանական վերլուծությամբ: Հանգամանորեն նշանակում է՝ հանգամանքները, պայմանները, պատճառները բոլորը միասին նկատի առած², մանրամասն կերպով, մի առ մի³, հանգամանքները մի առ մի հիշելով, թվելով՝ հաշվի առնելով մանրամասները⁴, համակողմանի, բազմակողմանի⁵: Այսպիսով՝ «հանգամանորեն» բառը նշանակում է՝ մանրամասն, բոլոր հարակից պայմաններն ու կողմերը հաշվի առնելով, հիմնավորված, սպառիչ և ճշգրիտ կերպով: Այն ենթադրում է ոչ միայն տեղեկատվության ամբողջականություն, այլև դրա որակական բնութագիրը՝ հանգամանքների վերլուծություն և կապերի պարզաբանում: ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 1-ին կետի համատեքստում մեղադրանքի հիմքի մասին տեղեկացվելը կլինի հատվածային, բայց ոչ հանգամանորեն, եթե քրեական հետապնդում հարուցելու որոշման մեջ նշվի միայն մեղադրանքի փաստական նկարագրությունը՝ առանց փաստական հիմնավորման: Առանց մեղադրանքի փաստական հիմնավորման մեղադրյալը տեղեկացված է զուտ մեղադրանքի «սյուժեի» մասին:

Ի դեպ, նույնիսկ խորհրդային դատավարագետները XX-րդ դարում նշում էին, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մեջ քննիչը, առանց մանրամասն նկարագրելու իր կողմից հավաքված բոլոր տվյալները, պարտավոր է վկայակոչել այն ապացույցները, որոնք հիմք են հանդիսացել որպես մեղադրյալ ներգրավելու համար: Հակառակ դեպքում որոշումը կլինի հիմնավորումից զուրկ,

¹ Մեր այս մտրեցումը հստակեցվել է՝ նկատի ունենալով նաև ՀՀ ՔրԴՕ-ում առկա նոր կարգավորումները: Տե՛ս **Ղամբարյան Ա.** Քրեական հետապնդումը (մեղադրանքը) մինչդարական վարույթում (ուսումնական ձեռնարկ): Եր., «Անտարես», 2016, էջ 58-59:

² **Ճերճեան Գ., Տոնիկեան Փ., Խաչատրյան Ա.** Հայոց լեզուի նոր բառարան: Պէրյուք: Կ. Տոնիկեան եւ Որդիք Հրատարակչատուն, 1992, էջ 1148:

³ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Հատոր 3, Հ. Աճառյանի անվ. Լեզվի ինստիտուտ: Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի հրատ. 1974, էջ 289:

⁴ **Աղայան Է. Բ.** Արդի հայերենի բացատրական բառարան: Հատոր 1 (Ա-Ձ), Երևան, Հայաստան, 1976, էջ 816:

⁵ **Սուքիասյան Ա.** Հայոց լեզվի հոմանիշների բառարան: Երևան, 1967, էջ 586:

ինչով կոպտորեն կխախտվի ԽՍՀՄ Սահմանադրությամբ հռչակված մեղադրյալի պաշտպանվելու իրավունքը¹:

Այս համատեքստում զարմանալի է, որ XXI-րդ դարում, երբ ՀՀ Սահմանադրության տեքստում էքսպլիցիտ ամրագրվել է մեղադրանքի հիմքի մասին հանգամանորեն տեղեկացվելու մեղադրյալի իրավունքը, դեռևս հնչում են կարծիքներ այն մասին, որ ներկայացված մեղադրանքի հիմքի մասին հանգամանորեն տեղեկացվելու սահմանադրական իրավունքը ներառում է միայն մեղադրանքի փաստական նկարագրությունը՝ առանց ապացույցներ վկայակոչելու և վերլուծելու (փաստական հիմնավորման): Օրինակ՝ Ա. Ղազարյանը նշում է, որ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մեղադրանքի հիմքը մեղադրյալին վերագրվող ենթադրյալ փաստերն են, փաստական հանգամանքն է, իսկ ապացույցներին ծանոթանալու հարցը վերաբերում է ոչ թե մեղադրանքի հիմքի մասին տեղեկացվելու իրավունքին, այլ գործի նյութերին ծանոթանալու իրավունքին, որը լրիվ ծավալով ծագում է նախաքննության ավարտին²: Հեղինակը մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկացվելու մեղադրյալի իրավունքը պատկերավոր բնորոշում է որպես մեղադրյալի իրավունքների «թագուհի»³, սակայն «թագուհուն» գրկում է թագից, երբ այս հիմնական իրավունքի գործողության ոլորտից դուրս է թողնում մեղադրանքի փաստական հիմնավորումներ ներկայացնելու պահանջը:

Մեր պատկերացմամբ դատավարագետի այս մոտեցման պատճառն այն է, որ նա մեղադրանքի փաստական հիմնավորմանը տեղեկացված լինելու իրավունքը միախառնել է նյութերին ծանոթանալու իրավունքի հետ: Մինչդեռ, մեղադրանքի փաստական հիմնավորումները ներկայացնելու սահմանադրական պահանջը չի ենթադրում մեղադրյալին ապացույցներ տրամադրելու պարտականություն: Այսինքն՝ մեղադրանքի հիմքին (փաստական հիմնավորմանը) տեղեկացվելու իրավունքը վերաբերում է քրեական հետապնդում հարուցելու որոշման մեջ ապացույցներ վկայակոչելուն և դրանք վերլուծելուն, իսկ նյութերին ծանոթանալու իրավունքն առանձին դատավարական իրավունք է (այս մասին՝ հաջորդիվ):

Ի դեպ, այս իրավունքի էության բացահայտման տեսանկյունից կարևոր է հետևյալ հանգամանքը: Նկատի ունենալով, որ մեղադրանքի (արարքի) փաստական նկարագրությունն այնուամենայնիվ մեղադրանքի փաստական կողմի հենասյունն է, մեղադրանքի փաստական նկարագրությանը և փաստական հիմնավորմանը տեղեկացվելու մանրամասնության աստիճանը որոշելու չափորոշիչները պետք է տարբերակված լինեն: Մեղադրյալը մեղադրանքի փաստական նկարագրության մասին հանգամանորեն տեղեկացված կլինի, եթե քրեական հետապնդում հարուցելու որոշման մեջ ներկայացված է հանցակազմի

¹ **Чельцов М.А.** Советский уголовный процесс. Издание 2-е, перераб. - М.: Госюриздат, 1951. - С. 275.

² **Ղազարյան Ա.**, *Ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկացվելու մեղադրյալի իրավունքը (գիտագործնական մեկնաբանություններ):* ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 2024, № 2 (114), էջ 109-110:

³ *Տե՛ս նույն տեղում, էջ 85:*

տեսանկյունից էական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքների նկարագրությունը, այնքանով, որքանով դրանք պարզված կլինեն հանրային քրեական հետապնդում հարուցելու պահին: Մեղադրյալը կհամարվի մեղադրանքի փաստական հիմնավորման մասին հանգամանորեն տեղեկացված, եթե դատախազը, հաշվի առնելով հանրային շահի պաշտպանության պահանջը և հիմք ընդունելով «թույլատրելի քանակով և խորությամբ» բանաձևը, որոշի, թե որ ապացույցները կարող են վկայակոչվել և ինչ մանրամասնությամբ դրանց բովանդակությունը կարող է ներկայացվել:

3.3. Ապացույցներ վկայակոչելու պահանջի քրեադատավարական հիմքերը

Քրեական հետապնդում հարուցելու որոշման մեջ ապացույցներ վկայակոչելու և դրանք վերլուծելու եղանակով մեղադրանքը հիմնավորելու (փաստական հիմնավորման) պահանջի հիմքում ընկած են երկու դատավարական նորմեր:

Առաջին՝ քրեական հետապնդում հարուցման (որպես՝ որոշման) և քրեական մեղադրանքի (որպես՝ որոշակի անձի կողմից ենթադրյալ հանցանք կատարելու մասին վարկածի) դիալեկտիկական միասնության պարագայում քրեական հետապնդում հարուցելու օրենսդրական բնորոշումն անհրաժեշտ է դիտարկել մեղադրանքի օրենսդրական բնորոշման հետ անխզելի միասնության մեջ: Այսպես՝ ՀՀ ՔրԴՕ 6-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետում տրված քրեական հետապնդման հարուցման բնորոշման մեջ նշված է, որ այս որոշումը պարունակում է «անձի ենթադրյալ հանցավոր արարքի նկարագրությունը»: Նույն հոդվածի 42-րդ կետում տրված մեղադրանքի բնորոշման մեջ նշված է, որ մեղադրանքը որոշակի անձի կողմից ենթադրյալ հանցանք կատարելու մասին վարկած է, որն ունի փաստական հիմնավորում: Այսպիսով՝ այս երկու օրենսդրական բնորոշումներում առկա են երկու հասկացություններ՝ մեղադրանքի փաստական հիմնավորում և արարքի նկարագրություն: Ինչպես նշել ենք, «փաստական հիմնավորում» ասելով պետք է հասկանալ այն ապացույցները և դրանց վերլուծությունը, որոնցով հաստատվում (հիմնավորվում) է արարքի նկարագրությունը, որը ՀՀ ՔրԴՕ այլ հոդվածներում կոչվում է մեղադրանքի փաստական նկարագրություն:

Այսպիսով՝ նշված ընդհանուր բնորոշումներից բխում է այն ընդհանուր պահանջը, որ ցանկացած պաշտոնական մեղադրանք, անկախ նրանից, թե այն դատավարության որ փուլում է կայացվում և ինչ դատավարական փաստաթղթում է ամրագրվում, բացի արարքի (փաստական) նկարագրությունից, պետք է ունենա փաստական հիմնավորում:

Երկրորդ՝ մեղադրանքի փաստական հիմնավորման պահանջը բխում է նաև ՀՀ ՔրԴՕ 189-րդ հոդվածի 4-րդ մասից, որտեղ սահմանված է, որ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ նշվում է նաև մեղադրանքի փաստական հիմքը (մեղսագրվող արարքի էությունը, կատարման տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները), որքանով դրանք պարզված են առկա ապացույցներով: Այս դրույթից իմպլիցիտ բխում է, որ այդ հանգամանքները պարզած ապացույցները ևս պետք է արտացոլվեն այդ որոշման

մեջ, հակառակ դեպքում «որքանով դրանք պարզված են առկա ապացույցներով» ձևակերպման առկայության իմաստը դառնում է վիճելի: Եթե քրեական հետապնդման մասին որոշման մեջ տվյալ փուլի համար թույլատրելի քանակով և խորությամբ ապացույցներ չվկայակոչվեն, ապա մեղադրյալը հնարավորություն չի ունենա պարզելու, թե հսկող դատախազն արդյոք պահպանել է «որքանով դրանք պարզված են առկա ապացույցներով» օրենսդրական պահանջը:

Մեղադրանքի փաստական հիմնավորման բացակայության դեպքում վերադաս դատախազի համար ևս կծագի գործնական բարդություն հասկանալու, թե հսկող դատախազը վարույթի նյութերում առկա որ ապացույցների հիման վրա է պարզել այս կամ այն հանգամանքը, այսինքն՝ արդյոք պահպանել է «որքանով դրանք պարզված են առկա ապացույցներով» օրենսդրական պահանջը:

3.4. Ապացույցներ վկայակոչելու սահմանափակումները

Քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման փաստական հիմնավորումները ներկայացնելու պահանջը քննարկելիս պետք է նկատի ունենալ ստորև նշված սահմանափակումները:

Նախ՝ մեղադրանքի փաստական հիմնավորումները ներկայացնելու օրենսդրական պահանջը չի ենթադրում մեղադրյալին ապացույցներ տրամադրելու պարտականություն: Ներկայացված մեղադրանքի փաստական հիմնավորումները ներկայացնելը պայմանավորված է մեղադրանքի (փաստական) հիմքի մասին հանգամանորեն տեղեկացվելու մեղադրյալի իրավունքով, իսկ ՀՀ ՔրԴՕ 43-րդ հոդվածի 1-ին մասում մեղադրանքի փաստական հանգամանքների մասին տեղեկացվելու իրավունքը և համապատասխան նյութերին ծանոթանալու իրավունքը շարադրված են որպես ինքնավար իրավունքներ:

Երկրորդ՝ մեղադրանքի փաստական հիմնավորումը պետք է ներկայացնել նախաքննության փուլի համար թույլատրելի քանակով և խորությամբ (մանրամասնությամբ): Թեև մեղադրանքի փաստական հիմնավորումը ներկայացնելու պահանջը բխեցվում է, ի թիվս այլնի, նաև մեղադրանքի հիմքի մասին հանգամանորեն տեղեկացվելու սահմանադրական իրավունքից (ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 1-ին կետ), սակայն մեղադրանքի փաստական հիմնավորման մասով անձին տեղեկացնելու մանրամասնության աստիճանը պետք է որոշել՝ հաշվի առնելով նաև հանրային շահի պաշտպանության անհրաժեշտությունը: Սա նշանակում է, որ հսկող դատախազը պետք է որոշի, թե նախաքննության այդ ժամանակահատվածում հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ հանրային շահի պաշտպանության տեսանկյունից որ ապացույցները կարող են վկայակոչվել և ինչ մանրամասնությամբ դրանց բովանդակությունը կարող է ներկայացվել:

«Թույլատրելի քանակով և խորությամբ» բանաձևը կիրառելիս դատախազը պետք է հիմք ընդունի վարույթի հանրայնության սկզբունքից անմիջականորեն բխող այն պահանջը, ըստ որի՝ անձի իրավունքների կամ ազատությունների սահմանափակումը պետք է համաչափ լինի հակակշիռ հանրային շահերի պաշտպանության նպատակին (ՀՀ ՔրԴՕ 15-րդ 4-րդ մաս): Քրեական

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 4(121)2025

հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ նպատակահարմար չէ վկայակոչել այնպիսի ապացույցներ կամ ապացույցներում ամրագրված այնպիսի տվյալներ, որոնք վարույթի այդ փուլում կարող են դառնալ հանցանքի կատարման պատճառ, կամ կարող են վտանգել վարույթի մասնակիցների կամ այլ անձանց իրավունքները կամ իրավաչափ շահերը, կամ կարող են հանգեցնել օրենքով պահպանվող գաղտնիքի հրապարակման:

Նախաքննության բնականոն ընթացքն ապահովելու նպատակով դատախազը հետապնդում հարուցելու որոշման մեջ ապացույցները վկայակոչելիս պետք է նախապատվություն տա հատկապես օբյեկտիվ բովանդակությամբ ապացույցներին, օրինակ՝ արտավարության փաստաթղթերին, իրեղեն ապացույցներին: Թվայնացված հասարակությունում, օրինակ՝ տեսաձայնագրությունները դարձել են պայմանական ասած՝ ամեն երկրորդ քրեական վարույթի նյութերի անբաժանելի մասը:

Անձնային ապացույցները ներկայացնելու անհրաժեշտության դեպքում քրեական հետապնդում հարուցելու որոշման մեջ կարելի է նշել ցուցմունք տված անձի ընդհանուր կարգավիճակը՝ առանց անհատականացնող տվյալների, օրինակ՝ կարելի է նշել «ականատեսի ցուցմունքով (...)», «կազմակերպության աշխատակիցների առերեսման արձանագրություններով (...)»: Նախաքննության փուլում մեղադրանքի փաստական հիմնավորման մեջ տվյալների այսպիսի սահմանափակումները կարող են արդարացվել բացառապես հանրային շահի ապահովման անհրաժեշտությամբ: Ի դեպ, համեմատության համար նշենք, որ պատգամավոր Մ. Գրիգորյանի գործով ՀՀ գլխավոր դատախազը միջնորդագրում վկաների որևէ անհատական տվյալ չէր նշել, ինչը համապատասխանում է «նախաքննության փուլի համար թույլատրելի քանակով և խորությամբ» պահանջին, մինչդեռ պատգամավոր Հ. Աղազարյանի գործով ՀՀ գլխավոր դատախազը միջնորդագրում նշել էր վկաների անունը և ազգանունը՝ առանց այլ անհատականացնող տվյալներ (բնակության վայրը, հեռախոսահամար) մանրամասնելու:

Ասվածի համատեքստում նաև պարզ է դառնում, թե ինչու մեղադրական եզրակացությունում և դատավճռում մեղադրանքի փաստական հիմքի տարրերը (փաստական նկարագրության և փաստական հիմնավորման) արտացոլվում են առավել մանրամասն, քան քրեական հետապնդում հարուցելու որոշման մեջ: Մեղադրական եզրակացությունում և դատավճռում մեղադրանքը շարադրվում է ավելի մանրամասն և հիմնավորվում է առավել խորությամբ, քանզի այդ դատավարական ակտերը, ի տարբերություն քրեական հետապնդում հարուցելու որոշման, տվյալ փուլը եզրափակող և ամփոփող ակտեր են:

4. Եզրակացություններ

1) Պաշտոնական քրեական մեղադրանքը բաղկացած է երկու հիմքից՝ փաստական (որն իր հերթին ներառում է մեղադրանքի փաստական նկարագրությունը և դրա ապացուցողական հիմնավորումը) և իրավաբանական (որը

բաղկացած է արարքի իրավական գնահատականից և դրա իրավական փաստարկումից):

2) Քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման փաստական հիմքը պետք է լինի ինքնաբավ, դրանում անհրաժեշտ է արտացոլել ոչ միայն արարքի փաստական նկարագրությունը, այլև դրա փաստական հիմնավորումը՝ նախաքննության փուլի համար թույլատրելի քանակությամբ և խորությամբ: Առանց փաստական հիմնավորման, մեղադրանքը զրկվում է պատճառաբանվածությունից և վերածվում է զուտ հիպոթետիկ պատմվածքի:

3) Մեղադրանքի փաստական հիմնավորումը ներկայացնելու պահանջն ունի հզոր իրավական հիմքեր: Այն բխում է և՛ պետական մարմինների որոշումների պատճառաբանվածության ընդհանուր սահմանադրական սկզբունքից, և՛ մեղադրյալի՝ մեղադրանքի հիմքի մասին հանգամանորեն տեղեկացվելու սահմանադրական իրավունքից: Այս պահանջը նաև անուղղակիորեն պարտադրվում է ՀՀ ՔրԴՕ 189-րդ հոդվածի 4-րդ մասով, որը նախատեսում է, որ մեղադրանքի փաստական հիմքը նշվում է «որքանով դրանք պարզված են առկա ապացույցներով»:

4) Քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ փաստական հիմնավորում ներկայացնելն ունի իր տրամաբանական ու գործնական սահմանները: Դա չի նշանակում բոլոր ապացույցների լրիվ բացահայտում կամ մեղադրյալին դրանք տրամադրելու պարտականություն: Հիմնավորումը պետք է կատարվի «թույլատրելի քանակով և խորությամբ» բանաձևի հիման վրա՝ հաշվի առնելով հանրային շահի պաշտպանության անհրաժեշտությունը, վարույթի հետագա բնականոն ընթացքը, ինչպես նաև օրենքով պահպանվող գաղտնիքները: Գործնականում այս մոտեցումն արդեն կիրառվում է խափանման միջոցներ կիրառելու միջնորդություն և անձեռնմխելիությունից զրկելու վերաբերյալ միջնորդագրեր կազմելիս:

Օգտագործված գրականության ցանկ

- 1. Ղազարյան Ա.**, Ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկացվելու մեղադրյալի իրավունքը (գիտագործնական մեկնաբանություններ): ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 2024, № 2 (114):
- 2. Ղամբարյան Ա.**, Քրեական հետապնդումը (մեղադրանքը) մինչդատական վարույթում (ուսումնական ձեռնարկ): Եր., «Անտարես», 2016, 176 էջ:
- 3. Պետության և իրավունքի տեսություն:** Ուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան. 4-րդ հրատ., Եր., «Լուսաբաց», 2023, 476 էջ:
- 4. Алексеев С.С.** Собрание сочинений. В 10 т. Том 3: Проблемы теории права: курс лекций. - М.: Статут, 2010. - 781 с.

5. **Алекси Р.** Сбалансированность, конституционный контроль и представительство // Сравнительное конституционное обозрение. 2006. №2 (55).
6. Верховенство права и проблемы его обеспечения в правоприменительной практике: международная коллективная монография. 2-е изд., перераб. - М.: Статут, 2010. - 432 с.
7. **Должиков А., Васильева А.** «Почему? По кочану!»: принцип обоснованности в административном праве // Сравнительное конституционное обозрение. 2023. № 6 (157).
8. **Жогин Н.В., Фаткуллин Ф.Н.** Предварительное следствие в советском уголовном процессе. - М.: Юрид. лит., 1965. - 366 с.
9. **Карницкий Д.А., Строгович М.С.** Уголовно-процессуальный кодекс РСФСР. Текст и постатейный комментарий. - М.: Юрид. изд-во НКЮ РСФСР, 1925. - 375 с.
10. Курс уголовного процесса / Под ред. Л.В. Головки. - М.: Статут, 2016. - 1278 с.
11. **Полянский Н.Н.** Очерки развития советской науки уголовного процесса. - М.: Изд-во АН СССР, 1960. - 212 с.
12. **Рахунов Р.Д.** Участники уголовно-процессуальной деятельности. - М.: Госюриздат, 1961. - 277 с.
13. **Сабитов Р.А.** Общая теория квалификации противоправных и правомерных деяний и событий: монография. - М.: Юрлитинформ, 2022. - 464 с.
14. **Стремовский В.А.** Предварительное расследование в советском уголовном процессе. - М.: Госюриздат, 1958. - 136 с.
15. **Хабермас Ю.** Демократия. Разум. Нравственность: Московские лекции и интервью / Пер. с нем. - М.: КАМІ, 1995. - 256 с.
16. **Чельцов М.А.** Советский уголовный процесс. Издание 2-е, перераб. - М.: Госюриздат, 1951. - 511 с.

СТРУКТУРА УГОЛОВНОГО ОБВИНЕНИЯ В КОНТЕКСТЕ ПОСТАНОВЛЕНИЯ О ВОЗБУЖДЕНИИ УГОЛОВНОГО ПРЕСЛЕДОВАНИЯ

Аннотация

В настоящей статье рассматриваются структурные элементы уголовного обвинения в материальном смысле и необходимость их отражения в

постановлении о возбуждении уголовного преследования. Обвинение рассматривается как единство двух относительно самостоятельных оснований — фактического и юридического, каждое из которых состоит из описания (квалификации) и соответствующего обоснования. Особое внимание уделяется фактическому обоснованию обвинения, то есть представлению и анализу доказательств, что является одним из необходимых условий реализации конституционного права обвиняемого на обстоятельное уведомление об основании обвинения.

В статье констатируется, что обвинение, закрепленное в постановлении о возбуждении уголовного преследования, должно содержать не только фактическое описание и юридическую квалификацию, но и соответствующее им обоснование — в объеме и глубине, допустимых для данной стадии процесса. Правовые основания этого требования раскрываются на конституционном (мотивированность решений, право на обстоятельное уведомление о характере и основании обвинения) и уголовно-процессуальном (соответствующие нормы УПК РА) уровнях. Автор также исследует ограничения, связанные со ссылкой на доказательства.

Ключевые слова: структура обвинения, фактическое основание обвинения, фактическое описание обвинения, фактическое обоснование обвинения, юридическое основание обвинения, юридическая квалификация деяния, постановление о возбуждении уголовного преследования, требование о ссылке на доказательства, мотивированность, право на информацию об основании обвинения.

THE STRUCTURE OF A CRIMINAL CHARGE IN THE CONTEXT OF A DECISION TO INITIATE CRIMINAL PROSECUTION

Annotation

This article discusses the structural elements of a criminal charge in the material sense and the necessity of their reflection in the decision to initiate criminal prosecution. The charge is viewed as a unity of two relatively independent grounds: factual and legal, each consisting of a description (assessment) and corresponding justification. Particular attention is paid to the factual justification of the charge, i.e., the presentation and analysis of evidence, which is a necessary condition for realizing the defendant's constitutional right to be promptly and thoroughly informed of the nature of and grounds for the charge.

The article argues that a charge formalized in a decision to initiate criminal prosecution must have not only a factual description and a legal qualification but also a corresponding justification - to the extent and depth permissible for that procedural stage. The legal grounds for this requirement are revealed at both the constitutional level (reasoning of decisions, the right to be thoroughly informed of the grounds for the charge) and the criminal procedural level (relevant norms of the RA Criminal Procedure Code). The author also examines the limitations related to the citation of evidence.

Keywords: structure of a charge, factual basis of a charge, factual description of a charge, factual justification of a charge, legal basis of a charge, legal qualification of an act, decision to initiate criminal prosecution, requirement to cite evidence, reasoning, right to be informed of the charge's basis.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 01.08.2025 թ., տրվել է գրախոսության 21.08.2025 թ., ընդունվել է տպագրության 05.09.2025 թ.: